ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ԴՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՈՆԿՐԵՏ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՐՊԵՍ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանը | 2022 թ. հունիսի 27-ից մինչև 2022 թ. օգոստոսի 12-ը |
| Անունը, ազգանունը, հայրանունը | Դանիել Շահումյան Մնացականի |
| Ծրագրի անվանումը | Հանրապետության նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչության առջև դրված կանոնադրական խնդիրներից բխող որոշակի ժամկետով կոնկրետ հանձնարարականներ կատարելու նպատակով՝ սոցիալական մեդիայի հաշիվների հետ աշխատանքների իրականացում |

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Սոցիալական մեդիայում (Facebook, Twitter) Հանրապետության նախագահի և Հանրապետության նախագահի աշխատակազմի գործունեության, ինչպես նաև Հայաստանի ներքաղաքական, տնտեսական, տարածաշրջանային հրատապ խնդիրների, տեղ գտած կարևոր նյութերի, այդ թվում՝ բարձրացված հրատապ հարցերի մասին ամենօրյա կտրվածքով վերլուծական տեղեկանքների նախապատրաստում, սոցիալական ցանցերի միջոցով քաղաքացիների հետ կապի պահպանում, հաշվետվությունների պատրաստում:

2. Վերոհիշյալ սոցիալական պլատֆորմներում ՀՀ նախագահի աշխատակազմի պաշտոնական հաշիվների վարման վերաբերյալ ռազմավարական առաջարկությունների մշակում, դրանք ՀՀ նախագահի աշխատակազմի համապատասխան պաշտոնյաներին ներկայացում, համաձայնեցում, գործողությունների հաջորդականության մշակում:

3. Facebook սոցիալական ցանցում ՀՀ նախագահի աշխատակազմի պաշտոնական էջում արված 29 հրապարակում, ընդ որում՝ յուրաքանչյուր հրապարակման համար համապատասխան մուլտիմեդիային կոնտենտի (լուսանկարներ և տեսանյութ) և տեքստի ընտրություն: Բոլոր հրապարակումների մեկնաբանությունների մոդերացիա շուրջօրյա ռեժիմով:

4. Ֆեյսբուք սոցիալական ցանցում քաղաքացիներից ստացված և մշակված 27 նամակ, որոնցից 9-ը ստացել են պատասխան նախապես համաձայնեցված թեմատիկ պատասխանների շրջանակում, 1 նամակ ուղարկվել է ՀՀ նախագահի աշխատակազմի

քարտուղարության բաժին հետագա ընթացք ապահովելու նպատակով: Մյուս նամակները պատասխան չակնկալող, հստակ բովանդակություն չունեցող նամակներ են եղել:

5. Հանրապետության նախագահի աշխատակազմի թվիթերյան հաշվի ստեղծում, ձևավորում և անգլերենով 15 թվիթի նախագծում և հրապարակում:

6. Կատարված աշխատանքների մասին նախատեսված ժամկետներում հայերեն լեզվով գրագետ, ամբողջական և համապարփակ վերլուծական տեղեկանքների նախապատրաստում:

---
(ստորագրությունը)

Դանիել Շահումյան
(անունը, ազգանունը)

12.08.2022թ.